

Մ. Ս. Հասարկյան

ՀՍՍՌ ԳԱ Բղրակից-անդամ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԴԱՎԹԱՐԸ*

Քսանյոթերորդ էջի խաղը նույնպես ալիֆ-ով (ա) է վերջանում, որի սկզբից հայերեն գրված է. «էս Արուսիի ասած է, թեջլիս բայաթի»: Դեռևս չթարգմանված այս բարդ թեջնիս-բայաթին բաղկացած է 5 տունից, յուրաքանչյուրը 8 տող. առաջին երկուսը և վերջին երկուսը 11 վանկից, իսկ մեջտեղի չորս տողը՝ բայաթին 7-ական վանկից: Առաջին տունը գրված է հայերեն պարզ բոլորագրով, մյուս տունները՝ նոտագրով: Երրորդ տունը վերջացրել է ավարտական, աստղաձև, վերջակետով և վրացերեն գրել «Արուսիի ասած, բայաթի», ապա շարունակել ևս երկու տուն, բաժանելով 9 հատ խաչաձև վերջակետով, այլևս կարևորություն չտալով գլխատառերին: Համոզված ենք, որ սխալ կլինեք սրանից եզրակացնել, թե խաղը հորինել է արտագրելու պրոցեսում, որովհետև երեք տունից բաղկացած թեջնիս-բայաթի չունի հեղինակը, այլ պարզապես մոռացության արդյունք է:

Շատ աշխույժ այս խաղը սկսվում է «Աշուղ արարածը որսկանի նման է դուրս եկել» տողով և դեռևս չի թարգմանված հայերեն:

Հաջորդ էջի խաղը նույնպես ալիֆ-ով վերջացող թեջնիս-բայաթի է (հայատառ), բայց գրված է միայն առաջին տունը՝ նախորդի ձևով 8 տողից բաղկացած, հետևյալ բովանդակությամբ.

Յարի ատամները նմանեցրել եմ մարգարիտի ու լալի.

Գոհարեղենս բարձած հազար-հազար ուղտերի.

Ես կանչում եմ ալլահին.

Յողութ, մարջան ու լալին,

Կաթնով ճաշ եփող վարպետ

Հսկիր հարամ-հալալին:

Թե ձգտող ես, եկ, տես կանգնած հիլալին¹⁰

Ամթ, պատիվ ունեցող, հազար նամուսի տերին:

Գեղեցիկ բոլորագրով սկսած այս խաղի շարունակությունը չի արտագրել հեղինակը և էջի մեծագույն մասը մնացել է մաքուր: Սկզբում անփույթ ձեռագրով գրված է՝ հայերեն. «էս Արուսի ասած է. թեջլիս բայաթի», լուսանցքում՝ «ալիֆ»:

Սրանով ավարտվում է ա(ալիֆ) տառով վերջացող բուն դավթարի խաղերից մեկը, անկասկած, դրած տարբեր ժամանակներում:

* Սկիզբը տե՛ս «Տեղեկագիր», 1963, № 10, էջ 3—32:

¹⁰ Կիսալուսին, մահիկին:

29-րդ էջում, ԲԵ(Բ) տառով վերջացող առաջին խաղը քարշաձև (եղագլամա) է, բաղկացած մոտ 60 տողից: Երկար վանկերով հորինված մեկ, երկու, հիմնականում երեք տողերին հաջորդում են միջանկյալ 5 վանկանի 6—8 տողանոց խիստ հանգավորած աշխույժ տողեր, վերինների հետ կազմելով մեկ տուն: Սկզբից գրած է «էս Արութի ասած է. եղագլամա» (քարշաձև): 6 տունից բաղկացած այս խաղը սկսվում է հետևյալ տողով—«Աղեղը մի ձգի, զուր մի արձակիր նետդ», բայց չենք թարգմանել առայժմ միայն այն պատճառով, որ դժվար է հայերենում պահպանել 5 վանկանի տողերի ճոխ հանգավորումը: Առաջին տողի օխուխ բառն ուղղել է, վերը դրել օխուն (նետդ):

30-րդ էջում ԲԵ-ով վերջացող շատ ավելի բարդ թեքնիս է, որը նույնպես չի թարգմանված, այս անգամ այն պատճառով, որ դեռևս լրիվ չի վերծանված: 31-րդ էջի ԲԵ-ով սկսվող վարսաղ-ը (թարգմ. 23) բացառություն է կազմում, նրանով, որ հեղինակի անունը չկա վերջում: Նախապես ենթադրում էի, թե վերջին տունը մոռացել է գրել, բայց այժմ համոզված եմ, որ նախավերջին տողում իր անունը չի գրել, որովհետև ավելի կարևոր է եղել յարից «ձեռք քաշելու» պատճառը գրել, քան ուղղակի գրել, թե «Սայաթ-Նովան եմ, իմ յարից վազ անցա», մինչդեռ գրված է. «էն զամանն է (ժամանակները, էպոխան), վուր իմ յարից վաղ անցա»: Սկզբից գրած է «էս Արութի ասած է, յարանա վարսաղ»:

Հաջորդ էջի (32) խաղը վերջանում է ԹԵ (թ) տառով, որ արաբ. այբուբենի երրորդ տառն է: Սկզբից կարդում ենք. «էս զանջիլամա-էղագլաման Արութի ասած է», այսինքն շարակապ-քարշաձև խաղ է, որի տուները սկսվում են նախորդների վերջին բառով: Յուրաքանչյուր տան առաջին երեք տողերը համահանգ են, չորրորդ տողը ունի նույն հանգը, որպիսիք ունեն հաջորդող 5 վանկյա երկու տողերը: Այսպիսով, յուրաքանչյուր տունը բաղկացած է չորս երկար, երկու կարճ տողերից, բացի առաջին տուներից, որ ունեն երկուական երկար, երկուական կարճ տողեր: Այսպիսով, նույնպես շթարգմանված այս խաղը ունի 6 տուն, 32 տողից: Խաղի առաջին տողն է—«Մտա էշխի բազար, ընկա կշեռքի» (հավասարակշռվեցի): Այս էջն է, որ հեղինակը սխալմամբ համարակալել է նախորդի համարով՝ լա (31):

33-րդ էջի ԲԵ-ով վերջացող խաղը մի գեղեցիկ թեքնիս է. «Գնացի, յարին ասի, էլ չեմ դիմանում. Թիթեռի պես վառվող մոմիդ նետիր ինձ»: Վերջում (վրացերեն) խնդրում է, որ ընթերցողը ողորմի ասի: Այս և նախորդ խաղը անտարակույս երգել է հեղինակը: Այդ երևում է որոշ հանգակապ բառերը կրկին գրելով և ավելացնելով ամա՛ն բաղականությունը: Սրա թարգմանությունը դեռևս լրիվ ավարտված չէ:

34-րդ էջի ԲԵ-ով վերջացող «Յարանա-վարսաղի» թարգմանությունը տպագրվել է հայերեն (52) առանց վերջին քառատողի, որը հետևյալն է.

էշխետ հիվանդ իմ, յար, դուն ինձ պահպանի.

Քու ձիւքին է. մոզրտ գամ դիդ-դարմանի.

Եկ, մի սպանի Սայաթ-Նովու նրմանին.

Յա՛ր, ինձ խղճա՛, փրկի՛ր, հարա՛յի-մաղաթ:

էջերի համարակալման երկրորդ սխալը կատարվել է այս էջում. լգ (ճիշտը՝ լդ) գրելու փոխարեն կրկին գրել է լբ (32) և երկու համարի սխալը շարունակվել է մինչև 59-րդ էջը:

35-րդ էջում հաջորդական սե-ով վերջացող խաղ է։ Սկսվում է. «Վաթա-նեմես անցա, սոնաս տեսնելու» (թարգմանված է. «Յարիս կարոտ ճամփա ընդա տեսնելու» (56)։ Սկզբից գրած է. «էս Արութինի ասած է, զանջիլամայ»։ Սրա առաջին տունը ևս գրված է բոլորագրով, շարունակությունը՝ սովորական ձևագրով։ Նրկրորդ տունը մոռացել է տեղում գրել, ավելացրել է վերջում և վրացերեն զգուշացրել, որ այս զինջիլամա-յարանան, Արութինի ասած է և վերջին տունը գլխավոր տունից հետո է։

36-րդ էջում հաջորդական ջիմ-ով (ջ-ն արաբ. 5-րդ տառն է) սկսվող և ջ-ով վերջացող (բոլոր տողերը) աշուղական բանավեճային խաղ է (թարգմ. 55)։ Սկզբից գրած է. «էս Արութինի ասած է. ավալի ախրը (սկիզբ և վերջ) ջիմ»։ Առաջին տունը բոլորագիր է, շարունակությունը՝ սովորական։ Վերջում պատանի Մելքոն վրացերեն գրել է շենիս ձամիս (ձմիս) Մելքոն (թո եղբայրը Մելքոն է, փոխանակ՝ շենի ձամ)։

37-րդ էջում հաջորդական հն (հ) տառով վերջացող մի ուշագրավ ոտա-նավոր է սկսել և հինգ (կամ վեց) տող է գրել ու չի շարունակել։ Սկզբից հեղինակը հայտնել է. «էս նողդասըգ է»։ այսինքն արաբական այբուբենի կե-տերը չգրած տառերով ևս գրված, որով բառերը այլ (անիմաստ) ձև են ստա-նում։ Վերջին տողի մեջ կետերը լրացնելով և բառերն անջատելով ստացվում է—«Սարաուր սարումա հար աղամ ախմախ» (փաթաթվում է գլխիս ամեն մարդ՝ հիմար)։ Նման խաղը, որ հեղինակի գրածներից միակը չէ, վկայում է երգչի, արաբատառ դպրության մեջ վարժ լինելու մասին։ էջի ազատ մասում երգչի բարեկամ, արքունի գեղագիր, գրիչ-թարգմանիչ Պենդեկենց Հովհան-նեսը (Իովանես Պենտելաշվիլին), վրաց մխեդրուլի (բոլորագիր) չքնաղ ձե-ռագրով թողել է հետևյալ հայերեն երկտողը—«էս գիրն ով որ կարթաք մե-մե բերան վուղուրմի ասեք, աստված սիրեք»։ Նույնը՝ ոչ պակաս գեղեցիկ հայկական տառերով, բայց անավարտ, գրված է ներքևից։ «էս գիրս օվոր կարթաք մէ մէ բէրան...»։ Սրանց հաջորդում է երգչի որդի Մելքոյի ճանկըռ-տոցը՝ կրկին վրացերեն «շենիս ձմիս Մելքոն»։ Կրճատ ձմիս բառը այն-քան անվարժ է գրված, որ վաստակավոր սայաթնովագետներից մեկը հար-ցականով, զլիս է կարդացել։ Սրան հաջորդում են ավելի անվարժ գրած վրաց այբուբենի տառերը—Մելքոյի վարժությունները։ Այս գրություններից երե-վում է, որ Սայաթ-Նովան Թիֆլիսից վտարվելիս (որպես քահանա) իր դավ-թարը թողել է Պենդեկենց Իովանեի մոտ, հավանաբար արտագրելու համար։ Իսկ վերջինս այս հանձնարարությունը կատարել է, թե ոչ, հայտնի չէ (հի-շենք Թիֆլիսի ավերումը), բայց երևում է, որ դեռևս երգչի բացակայության ժամանակ Իովանեն դավթարը վերադարձրել է նրա ընտանիքին, որից հետո ազատ էջերում Մելքոն իր «ազատ» վարժություններն է կատարել։

38-րդ էջում արաբական հաջորդ խն տառով վերջացող «յարանա» (սի-րային) մի խաղի առաջին տունը գրել է, բայց, ինչպես շատերը, չի շարու-նակել։

Սըրահից ելնող յար, նայիր պարպասին.

Դու զարիբ սիրող ես, ես զարիբ ղոնաղ.

էշխիցդ հիվանդ եմ, կանգնած գունաթափ.

Փա՛ռք իրեն, որ ես քեզ տեսա սափ ու սազ։

Սրան հաջորդում է վրացատառ գրված հայտնի իլահին, հորինված 1758 թ. հուլիսի 9-ին—«Մահըս իրա ոտով գու քա» (47)։ Խաղը վերջանում է միս-ով

(մ) տառով, այսինքն ոչ իր տեղում շտապ գրվել է ազատ էջում, ուստի և թվագրված է լուսանցքում. «էս իւահի է, Արութինի ասած, հուլիսի 9-ին, Քր. 446-ին»: Խաղի վերջին տողը ավարտել է աջ լուսանցքում:

Հաջորդ էջում հայատառ, կրկին շարունակվում է դիվանի կարգը՝ դալ (դ) տառով: Այս անգամ երկլեզվյա խաղ է արտագրված. տողամեջ պարսկերեն և աղբբեջաներեն, միաժամանակ՝ «ավալ-ախըր» — բոլոր տողերը սկսվում և վերջանում են դ տառով: Առաջին տունը նույնպես բոլորագրով է: Ինչպես սկզբից հայերեն, այնպես և վերջում վրացերեն ծանոթագրված է. «էս ավալի ախըրը Արութինի գրած է», վրացերեն ավելացրած՝ «դ-ի վրա, մեյդանի է»: Վերջին բառը կարելի է հասկանալ, որ խաղը հրապարակային է, այսինքն՝ աշուղական բասի (մրցումների, վեճի) համար գրված: Թեև, համարյա լրիվ, վերծանված է, բայց չի թարգմանված:

40-րդ էջում հաջորդական զալ (զ) տառով վերջացող խաղ է: Սկզբից «էս Արութինի» ասած է, օգտվմամ (խրատական): Առաջին շորս տողերը ևս բոլորագրով են գրված, շարունակությունը՝ մաքուր նոտրգրով, վերջում վրացերեն՝ «էս Արութինի ասած է, օգտվմամ-վարսաղ զ-ի վրա» (թարգմ. 38):

41-րդ էջում հաջորդական բն- (բ) տառով «ավալ-ախըր» ոտանավորի առաջին տունն է միայն, նվիրված աստծու ուժին ու բարերարությանը: Այս էջում ոչ միայն շարունակությունը, այլև ուրիշ խաղ չի գրված, ուստի և մեծագույն մասը մաքուր է մնացել:

42-րդ էջում «Հնդու դալամ քու նախը չի փչանա» (թարգմ. 9) խաղն է, հաջորդական զե (զ) տառով վերջացող: Սկզբից հայերեն ծանոթագրած՝ որպես վարսաղ Արութինի ասած, վերջում վրացերեն ծանոթագրված՝ որպես «ղափիա, Արութինի ասած, ով որ կարդա բարի հիշի»: Բայց ճիշտը՝ վարսաղն է: Առաջին տունը նույնպես բոլորագրով է սկսած:

Ինչպես տեսանք, Սայաթ-Նովան իր ծրագրած այս երկրորդ հայատառ Դիվանը, որի մեջ, ըստ երևույթին, պետք է ամփոփվեին մինչև 1758 թ. (ներառյալ) գրված թուրքերեն-աղբբեջաներեն խաղերը, սկսել է Դիվանի սկզբունքը խախտելով: Այսինքն, պետք է սկսեր և ավարտեր արաբական այբուբենի հաջորդական տառերով վերջացող խաղերով, բայց առաջին 12 էջերը նվիրել է ներածական նշանակություն ունեցող ստեղծագործությունների՝ շախաթայադիվանիների, իլահիների, իր մուսային նվիրված ներբողի և այլ նման բովանդակություն ունեցող մուխամմասների: Միայն 13-րդ էջից է սկսում արտագրել ա (ալիֆ) տառով վերջացող խաղեր, էջերի ազատ մասերում հետագայի կատարած փոքր խախտումներով: Ըստ որում, 12-ից մինչև 19-րդ էջերում ոչ մի հայերեն տառ չկա, այլ խաղերը գրված են վրացական սովորական ձևագրով: Թվում է, թե նախապես այդ էջերը ևս պահած է եղել նույնպես վերամբարձ ձև ու բովանդակություն ունեցող խաղերի համար: Այս ենթադրության համար հավելյալ փաստ է ծառայում նաև այն, որ նախապես համարակալված էջերի լուսանցքներում չենք հանդիպում խաղերի վերջին տառերի թեկուղ մեկ անունի (ալիֆ, բե, թե և այլն), որպիսի փաստեր կան նաև այլ էջերում:

Հայատառ 23-րդ էջից սկսում է էջերի լուսանցքում նշել ալիֆ-ը մինչև 28-րդը, 29—31 էջերում՝ բե, 32—34-ում՝ բե... Ձև տառն ունեցող 42-րդ էջի խաղին պետք է հաջորդեր ս (սին) տառով վերջացող խաղ. և իրոք, 43-րդ էջի լուսանցքում գրած է սին (սխայմամբ սև գրելուց հետո, առանց և-ն ջրն-

ջելու, ավելացրել է ին և ստացվել է սեխն), բայց սույն էջի մեկ անավարտ և մեկ ավարտած խաղերը վերջանում են Բե-ով: 40-րդ էջում հաջորդական զալ-ով վերջացող խաղն է, որին պետք է հաջորդեր Բե (Բ)—արաբական այբուբենի 12-րդ տառով սկսվող խաղ. և ինչպես տեսանք 41-րդ էջում սկսել է Բ-ով վերջացող խաղ (թեև լուսանցքում գրել է Ռէ), բայց արտագրել է միայն առաջին շորս տողը: Նշանակում է հաջորդ 42-րդ էջի զե տառով խաղը, թեև իր տեղում է, բայց մեխանիկական շտապողականությամբ ընկել է Բ-ով վերջացող խաղերի արանքը, որոնք շարունակվում են մինչև 46-րդ էջը: Եթե դիվանի հաջորդ էջերում չհանդիպեին 1753, 1755 թթ. խաղեր, կարելի էր ենթադրել, թե երգչի Դիվանի մինչև 42-րդ էջը արտագրված է եղել 1758 թ. մարտ ամսից առաջ, որից հետո հորինվել են 43-րդ էջից սկսվող խաղերը, որովհետև այս և հաջորդ խաղը գրված են մեկ օրում՝ 1758 թ. մարտի 19-ին:

43-րդ էջում բոլորագրով սկսել է Բե-ով մի «հաղանա-ուշլամա» (աստվածային բովանդակությամբ երեքնակ) և, ինչպես շատ անգամ, գրել միայն առաջին տունը: Աղամին դրախտից վտարելու պատմությունն էր լինելու, ինչպիսին է հայերեն շարակապ խաղը (64): Աղատ թարգմանությամբ այդ տունը հետևյալ բովանդակություն ունի. «Տերը նպատակ դրեց ստեղծել մարդ. ստեղծեց լույս, Աղամին սուրբ, կինը սուրբ: Սև սատանան, այն օձի ձևն ընդունեց, կերցրեց հուր, պողահամ հուր, հատը՝ հուր (այս տողը կարելի է հասկանալ և—«կերցրեց նուր, պողահամ նուր (կամ՝ պողափորձ նուր) հատը՝ նուր. (կամ՝ «դժողք նուր, դժողք-հուր»): Նույն այս էջի վրացատառ, ամբողջական, դափիա խաղը՝ «օղորմի էն կամուրջ շինող վարպետին» 1758 թ. մարտի 19-ին թվագրված հրաշալի խաղն է (Ա-41):

44-րդ էջում, բոլորագրով, սկսել է խրատական խաղերից մեկը. «Ինչքան էլ վուր դուն մինձանաս, բարեկամ» (բառացի՝ ա՛յ, վարպետ), արտագրելով միայն ա տունը: Ժամանակին հարմար առիթ չգտնելով խաղը շարունակելու համար, էջի ազատ մասում գետեղել է վրացատառ այլ խաղ, իսկ այս էջում սկսած խաղը, հայկական նոտրգրով, լրիվ գրել է Դավթարի 69-րդ էջում (թարգմանությունը՝ ժողովածուի Ա-51):

44-րդ էջի աղատ մասում գրված է. «Պուունգնիրտ բլբուլի պես բաց արա» խաղը (Ա-39): Վերջում ունի վրացերեն ծանոթագրություն. «էս դափիա է, Արութինի ասած. գրված է մարտի 19-ին¹¹, Քրոնիկոնի 446-ին (=1758): Այս էջի ավելի ուշագրավ մասը հանդիսանում է երգչի նկարչական համեստ «մարզանքը». նկարել է երկու հատ «կյանքի ծառ», աջ կողմինը՝ խաչածեղ¹²: Դժվար է իմանալ, թե այդ պահին ինչ մտորումների մեջ է եղել հոգնած հեղինակը. բայց զարմանալի ստեղծագործական ավյունի մեջ է եղել այդ օրը՝ մարտի 19-ին (ն. տ. 30-ին), որովհետև նույն օրը միայն ադրբեջաներեն (գուցե միայն) երեք բարձրորակ խաղ է հորինել. տե՛ս Դիվանի էջեր՝ 43, 44, 55.

¹¹ Վերջին երկու հրատարակություններում, առաջինում թավ տպված 9 թվանշանի, իսկ քնդհանրապես իմ անփութության պատճառով «մարտի 19-ը» տպագրվել է «մարտի 10»: Ավելին. այս էջի նմանահանության տակ (Ժողովածու, 1963, էջ 49), 1758 թ. փոխարեն տպագրված է 1756, ինչպես և նախորդ էջի նմանահանության տակ՝ սխալ է «1756»-ը, պետք է լիներ 1758 (մայիսի 10):

¹² Տե՛ս «Ժողովածու», էջ 49, 1963 թ.:

վերջինը բարդ թեջնիսով-բառախաղով, իսկ թարգմանությունը՝ ժողովածուի Աղբր. բաժնում՝ 41, 39, 40: Բանաստեղծական նման պոռթկումներ շատ է ունեցել Սայաթ-Նովան, հատկապես գարնան ամիսներին—մարտ-հունիս, մանավանդ շատ բեղմնավոր 1758 թվականին: Մեզ հասած երեք լեզուներով գրված խաղերից թվագրված է մոտ մեկ քառորդը (54—55 հատ), որի կեսը՝ 27-ը՝ 1758 թվականին (16-ը աղբր., 11-ը հայերեն):

45-րդ էջում «Արուսիկի ասած օգութլաման» (խրատականը) «Յիփուր սարի լալեն կանանչ բաղ ընգեն» (Ա-37) գրված է պարզ բոլորագրով: Առաջին տունը (3 տողի մեջ) նույնպես գրվել է նախօրոք և որոշ ժամանակ անց ավելի հանգիստ վիճակում (ինչպես նկատելի է ձեռագրից) և այլ ղալամով, խաղը բոլորագրով, շարունակել է մինչև վերջը, որը բռնել է էջի կեսը: Վերջում, ինչպես անում է սովորաբար, ծանոթագրությունը գրել է նաև վրացերեն—«Այս խրատականը Արուսիկի ասած է. լավ ղափիա է», և որպեսզի ընթերցողը սա չվերագրի էջի երկրորդ կեսում վրացատառ գրված հաջորդ խաղին, ծանոթագրությունն առել է անկյունավոր երկարուկ շրջագծի մեջ:

Երկրորդ խաղը, նույնպես ղափիա, նույնպես բն-ով սկսվող, երգչի ամենատարածված ու սիրված երգն է. «Առանց քիզ ինչ կոնիմ սոյբաթն ու սազը», որի մասին խոսվեց վերը: Այս տարբերակի մասին կխոսենք նաև այստեղ. որովհետև երգչի խաղերի երեք հրատարակությունների համապատասխան ծանոթագրություններում (հայերենի № 21, աղբր. № 64) գրել էինք հետևյալը. «Մեծ ժողովրդականություն ստացած այս երգն արժանի է ավելի մեծ ուշադրության նաև այն տեսակետից, որ թարգմանված է հենց իր՝ հեղինակի կողմից, իր գրած աղբբեջաններն խաղից: Իհարկե, կարելի է ենթադրել և հակառակը, որ հայերենից է թարգմանված աղբբեջանները»: Վերջինիս համար պրկված ծանոթագրությունը (Ա-64) միայն լրացնում է այս կարծիքը—«Աղբբեջաններն օրինակից կատարված բառացի թարգմանությունն է սա: Ո՞ր լեզվով է առաջ գրել, դժվար է իմանալը, բայց մեզ համար ավելի կարևորը տարբերություններն են և ոչ թե բառացի համընկնող տողերը: Այս տարբերությունների մեջ է գրսևորվում երգչի գրական ճաշակն ու իմաստությունը, որը երկվաց վերը բերած օրինակներից:

Այստեղ կավելացնեմ նաև վերջին տունը, տարբերություններն ավելացնելու նպատակով: Հայերենում կարգում ենք.

Բըլքամ մե մարթ ռաստ գա, վուր ինձ խըրատե,
Գո՛ղալ, քու էշխեմեն սիրտըս ազատե.
Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է
էս քու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ:

Աղբբեջաններն օրինակում տարբերությունը, առաջին հայացքից, մեծ չի երևում, բայց այդպես չէ.

Բլքամ մե մարդ տեսնիմ, վուր խըրատս ասե,
Անճար իմ դարդերուն մե դարման անե:
Ռափիղ Սայաթ-Նովեն անյար ի՞նչ անե,
Զունքի յարեն գու քան ջանգիրըն մեմեկ:

Այս չափածո, բայց բառացի թարգմանությունը մտածելու ավելի առիթներ է տալիս, քան ես կարծում էի առաջ, հայերեն օրինակի ազդեցության և ճշմարտան տակ:

Ինչպես նախավերջին, այնպես և այս վերջին տան ադրբեջաներեն տեքստի ավելի խոր, ուշադիր քննությունը ժխտում է իմ նախկին ենթադրությունը, երբ հակված եմ եղել ադրբեջաներեն բնագիր համարելուն: Այդ զգացել էի երեք տարի առաջ, բայց ժողովածուի վերջին հրատարակության շտապողականությունը հնարավորություն չտվեց անգամ ծանոթագրության մեջ փոփոխություն մտցնելու: Այժմ ինձ համար ավելի անկասկած է, որ խաղո՝ գրված է եղել մինչև 1754 թ. և հայերեն, գուցե երգչի առաջին հալածանքի ժամանակ: Սկզբից էլ ժողովածուների մեջ ճիշտ տեղադրել եմ 1753 թվականի տակ, թեև գրելու թվականը չի նշված դավթարում:

Նախ, եթե բնագիրը ադրբեջաներեն լիներ, ապա թարգմանելու ժամանակ կարող էր հայերենում պահպանել նախավերջին տան բերված երկու տողերը, որոնք հայ ընթերցողի կողմից պակաս չափով չէին ընկալվի, քան մահմեդականի կողմից (դերվիշի փոստը, շալը և զանգերը): Մինչդեռ մահմեդականի համար ոչ միայն անհասկանալի, այլ և ընկալելու դժգոհում մերժելի կլինեին «վանքերն ընկնելու ցանկությունը»: Երկրորդ, վերջիններիս համար միանգամայն անհասկանալի կլինեին «յոթն իմաստասերների» օրինակը: Երրորդ, հայերենի «բլբամ մե մարք ռաստ գա» նախադասությունը ադրբեջաներենում գրված է «Օլա բիր մարդ դորամ» (գուցե մի քաջ, վեհանձն, ազնիվ մարդ, տղամարդ տեսնեմ): Ադրբեջաներեն այս մարդ բառը, հեղինակը հայերենում կգրեր նո՛ւյն ձևով և ոչ թե մարք-թ տառով (մարդ), ինչպես գրել է միշտ, անսխալ ու անփոփոխ: Սխալը ե՛ս եմ թույլ տվել, որ ադրբեջաներենից կատարած թարգմանության մեջ մարդը դրել եմ ք տառով և ստացվել է սովորական մարդ (թուրք, աղամ, էր) բառը: Արվել է, իհարկե, նաև հայերենի ազդեցության տակ: Իզուր կլինի ենթադրել, թե վանկի համար հեղինակը կիրառել է պարսկերեն այդ բառը (մէրդ-մարդ) թուրքերեն՝ էր, աղամ, բառերի փոխարեն: Նման փաստ չունենք և տրամաբանական չէր լինի:

Կարելի է հիշել նաև այն, որ ադրբեջաներեն այս տարբերակը (թարգմանությունը) գտնվում է 1758 թ. գրված խաղերի շարքում, թեև այն կարող էր եղած լինել և 1755 թ. կազմած առաջին դիվանում, որի բն տառը պարունակող էջերը ևս ընկած, կորած են շատ այլ էջերի հետ: Մինչդեռ հայերենը գտնվում է առաջին դիվանի մեջ, որը կազմվել է 1755 թ.: Խաղի հայերեն բնագրի ծանոթագրության մեջ, վերջում հեղինակը գրել է. «Արութինի. լավ յարանա-ղափիա է». իսկ ադրբեջաներենի վերջում «էս Արութինի ասած է, ռաղիփի կողմից յարին խլելու վրա (فادومدهد) զափիա է»: Ադրբեջաներենում վերջին տան վերջին բառը «ջանգիրը» թարգմանել ենք «կայծերը», որովհետև պարսկերեն տարածված «ջէնգ»-կոիվ բառը ենթադրելու դժգոհում անիմաստ բան է ստացվում. «չունքի» (որովհետև) յարից են գալիս կոիվները, քանի որ նախորդ տողում գրված է «Սայաթ-Նովեն առանց յար ի՛նչ անե» նախադասությունը. այսինքն՝ յարից լա՛վ բան է սպասվում, և ոչ թե կոիվ: Բայց ավելի ճիշտ կլինեին ենթադրել նույն պարսկ. ժէնգ բառը, որ կնշանակի նաև ճառագայթ, արևի շող (—լույս, ջերմություն): Ընդհանրապես շատ դժվար է գործ ունենալ Սայաթ-Նովայի գրական ժառանգության, նույնիսկ կենսագրական հարցերի հետ, որոնց մեջ որոշակի տեղ ու նշանակություն

ունի նաև խաղերի հնարավորին չափ տրամաբանական, ժամանակագրական կարգով դասավորման խնդիրը¹³:

46-րդ էջի մեկ երրորդը զբաղեցնում է վերը հիշված «ինչ կոնիմ սոյբաթը, ինչ կոնիմ սազը» խաղը, իսկ երկրորդ մասում Են-ով վերջին խաղն է. «Վունդ վուրսուրթի ձեռից փախած մե մարալ» (Ա-11): Սիրածի գովքն արտահայտող այս դափիա խաղը, թվում է, հեղինակի աղբյուրներն ամենավաղ ստեղծագործություններից մեկը պետք է լինի:

Ամբողջ 47-րդ էջը զբաղեցնում է երգչի նշանավոր թեջնիս-բայաթիներից մեկը, բաղկացած 40 տողից (5 տուն): Այս շատ բարդ բառախաղով գրված գեղեցիկ ստեղծագործությունը վերծանելը ամիսնե'րի աշխատանք է պահանջում: Միայն վերջին տան մեջ վեց անգամ հիշվում է «Սայաթ-նովա» բառերը, որոնցից վերջինն է իր անունը, մնացած հինգը տարբեր նշանակություններ ունեն: Ամբողջ խաղը վերծանված է, բայց չի թարգմանված: Սկսվում է. «Վախում եմ, թե յարից հույսս կտրվի» տողով. վերջում գրված է «Արուծինի» — լուսանցքում՝ «լավ թեջնիս-բայաթի»: էջի սկզբից, երևի կրկին պատանի Մելքոն, դրել է վրաց այբուբենի առաջին տասն տառերը: Սովորականի նման համարակալված այս և հաջորդ էջը ևս կարծես դիվանի կարգից դուրս են մնում, որովհետև պահված են եղել, անշուշտ, ս (սիւն) տառի համար, բայց այդ տառով վերջացող նոր պատրաստ խաղ չի ունեցել հեղինակը: Այդ պատճառով էլ այս ազատ էջում դրել է մ (միմ) տառով վերջացող սույն խաղը, իսկ հաջորդ 48 էջում՝ ջ (ջիմ) տառով վերջացող խաղ. ուստի լուսանցքներում չի էլ նշել այդ տառերը:

48-րդ էջը զբաղեցնում է նույնպես 40 տողանոց (5 տուն) բայաթի խաղ, բայց ոչ թեջնիս, այլ «ջ-ըի վրա «հաղանա-վարսաղ», ինչպես դրել է աջ լուսանցքում: Սկսվում է «Ականջ արեք, էյ ուտաբար մեծ հայրեր» տողով և առաջին երկու տան մեջ հիշեցնում դատաստանի օրվա մասին, որ աշխարհը կբռնի փոթորիկը, սատանան կուրախանա, և հանդես կգան հաջուր-մաջուրները: Այդ պատճառով էլ խաղը կոչում է «հաղանա» (աստվածային): Վերջին երկու տունները խրատական-խոհական բովանդակություն ունեն, իսկ կենսագրական տեսակետից ուշադրության արժանի է վերջին տունը:

Սայաթ-նովա, կանչիր էյ երկնային գահ.

Խուլ չլինես, մեծ վարպետին ականջ կալ:

Վարպետի խոսքն է գոհար.

Հոգիդ կշինի պայծառ.

Թե ուզում ես փիր դառնաս,

Վարպետից առ անգիր քար:

13 Այս տեսակետից չի կարելի դարձանալ և ցավել, որ երգչի խաղերի ոտներն վերջին երկու հրատարակություններում, դրականադետ Գայսարյանի հանցանքով, խաղերը սխալ են դասավորված. նախ բոլոր թվական ունեցողները (թեկուզ հաջորդաբար), ապա թվական չունեցողները, առաջնորդվելով միմիայն մեխանիկական սկզբունքով, որը անընդունելի է դիտության, բանասիրության մեջ: Այդ նրա միակ նորամուծությունն է, այն էլ սխալ: Ավելի զարմանալի է, որ երգչի ժառանգությամբ բավականին խոր դրաղված մեր երիտասարդ բանասերներից մեկը վերջերս առաջարկել էր խաղերը հրատարակել ըստ դավթարի դասավորության, հաշվի չառնելով, որ դործ ունի երկու դարի անցյալ ունեցող հեղինակի ստեղծագործության հետ և չիմանալով, որ դավթարի կեսը կաղմած է դիվանի սկզբունքով, կեսը՝ տետրերի մեխանիկական միակցումով, կամ բաղմաթիվ խաղեր պատահած ազատ էջերում արտադրելով:

Թուրքերեն թող, տուր ֆարսի լեզվին, ապա,
Անդիր աֆղաներենին ու բելուջին:

Այս տողերը կարդալիս, չես կարող չհամոզվել, որ պարսկերենն ազատ իմացող Սայաթ-Նովան իր ականջով լսած պետք է լինի նաև պարսկերենին շատ մոտիկ աֆղաներենն ու բելուջերենը, այսինքն, որ իրոք պատանի երգիչը եղել է նաև այդ երկրներում, գուցե հենց գտնվելով վրաց Թեյմուրազ թագավորի շքախմբում, Նադիր Շահի արշավանքների ժամանակ:

49-րդ էջից նորմալ շարունակվում է դիվանը զն (զ) տառով. կրկին «թեջնիս-բայաթի» խաղով, որը սկսվում է «Յարը դուրս եկավ սրահից» տողով: Սա ևս, նախորդ (47-րդ էջի) բայաթի-թեջնիսի նման, բաղկացած է 40 տողից և նույնպես հեղինակի բարդ ու չքնաղ թեջնիսներից մեկն է¹⁴: Խաղի առաջին տունը նույնպես գրված է բոլորագրով, շարունակությունը՝ պարզ նոտրագրով: Ծանոթագրությունը սկզբից գրված է հայերեն, վերջից՝ վրացերեն. էջի ստորին լուսանցքի աջ անկյունում վրացերեն վարժ ձեռագրով գրված է «շենիս շվիլիս» (քո որդու):

50—54-րդ էջերում շ (շին) հաջորդական տառով վերջացող խաղեր են տրտագրված, բայց ոչ բոլորն ավարտած, միաժամանակ, ինչպես նախորդ շատ էջերի ազատ մասերում, այլ տառերով վերջացող ոչ միայն վրացատառ, այլև մեկ հայատառ խաղ է գրված: Էջի սկզբում հայերեն սովորական ձեռագրով հիշեցվում է, որ «էս (խաղը) Արուսի ասած է խալի վերա. եարանա»: Լուսանցքում՝ «շին»: Իրոք, այս խաղը նվիրված է սիրածի խալի գովքին, մի մոտիվ, որը համարյա պարտադիր է եղել շատ ու շատ մեծ ու փոքր աշուղների համար: Չենք կասկածում, որ այս խաղը ևս երգչի նորավարժ, պատահական ստեղծագործություններից մեկն է (թարգմ. տե՛ս Ժողովածուի մեջ՝ Ա-3): Առաջին տունը գրված է բոլորագրով, շարունակությունը՝ նոտրագրով: Էջի երկրորդ մասում 8 վանկյան «դուբեյթ» է, ինչպես ինքը հեղինակն է ասում աջ լուսանցքում՝ վերից վար: Իսկապես երկտողյա տունները բաժանել է, սկզբից խաչանշան դնելով և դարձրել 16 վանկյան հինգ տունից գազել, բայց տողերի ներքին հանգավորումը հարկադրում է դարձնել քառատող հինգ տուն: Խաղը, հեղինակի կողմից արտագրված է հետագայում և վերջանում է 1 (լամ) տառով: Թարգմանված է, բայց չի հրապարակված:

Հաջորդ 51-րդ էջի առաջին խաղը «Ավալ-ախրը» է—տողերի սկիզբն ու վերջը շ տառով, առաջին տունը՝ բոլորագրով: Սա նույնպես երգչի վաղ գործերից է, խառը բովանդակությամբ: Էջի երկրորդ խաղը (վրացատառ), ա (ալիֆ) տառով վերջացող 8-վանկյա, աշխույժ «թասլիբ» է, թարգմանված հայերեն (Ա-12):

52-րդ էջում հեղինակը բոլորագրով սկսել է «յարի վրա խրատական» մի խաղ, բայց գրել է միայն ա տունը: Շատ ցավալի է, որ այս խաղի շարունակությունը չի հասել մեզ, որովհետև շատ ուշագրավ սկիզբ ունի:

Ականջ մի դիր անփորձին ու անգետին.
Ձի տանջանքը բռնությունից է լինում.

¹⁴ Վերջերս Բաքվում հրատարակված Երզնի աղբյուրներին ժողովածուի մեջ հրապարակվել են նաև այս երկու թեջնիս-բայաթները (էջ 55—58), մեծ մասամբ առանց վերծանելու:

Թե ցանկանաս, որ անունդ հռչակվի,
(Գիտցիր) հերոսի լավը համեստությունից է լինում:

էջի մեծագույն մասում հայտնի քառալիկյա (վրացերեն, պարսկերեն, ադրբեջաներեն և հայերեն) խաղն է՝ վրացատառ, որը վերջանում է հայկական ծ տառով: Խաղի բնագիրն ու թարգմանությունը տես Ժողովածուի մեջ:

53-րդ էջում բոլորագրով սկսել է շրթնային հնչյուններից գուրկ, միաժամանակ շարակապ, մի բարդ խաղ և միայն մեկ տունը արտագրել, բայց թանաք է կաթացել ու քսվել նաև այլ մասերի: Գուցե այդ պատճառով էլ փորձել է ջնջել միայն առաջին տողը և խաղը մնացել է անավարտ, թեև լուսանցքում նշել է, որ «լավն» է: Էջի մնացած մասը լրացված է նախորդից ամիս ու կես հետո գրված և Բ (Բաֆ) տառով վերջացող «Ինչքան էլ վուր ասլանն աղվես տապալի» խաղով (Ա-42): Վրացատառ արտագրված այդ ղափիան գրվել է 1758 թ. ապրիլի 20-ին:

54-րդ էջի առաջին խաղը՝ յարի վրա ասած՝ թվելով (շումարա) խաղն է. «Փռման կուլի, ովոր յարի անուն տա» (Ա-13): Շ (շին) տառի վերջինն է սա, որի մեջ շատ անգամ կրկնվում է զուգում (տեսա) բայը: Բոլորագիր առաջին տունը երեք շարք կետերով անջատված է նոտրգիր հաջորդ տուններից (այդպես է նաև 52-րդ էջում, մասամբ նաև 57-րդ էջում): Այս բացառիկ փաստերը, իսպառ, չպետք է մտածել տան, թե բոլորագիրը պետք է դիտել միայն դիվանի խաղերի առաջին տունների համար: Դրա դեմ են խոսում սույն դիվանի առաջին 11 էջերը, այլև 23, 25, 45, 72 էջերը: Երկրորդ խաղը, Բե-ով վերջացող (հետագայում գրված) վրացատառ «խրատական վարսաղ»-ն է. «էնդուր կուլամ՝ սիրտը կոտրած առյուծն» (Ա-58) առաջին տողով: Խաղը հորինված է 1758 թ. մայիսի 8-ին (?):

Հաջորդ էջում (55) «Եղազլամա-ղանջիրլամա» (քարշաձև-շարակապ) խաղ է սկսել բոլորագրով—բայց կրկին վերջացրել է միայն առաջին տունը, բաղկացած 10—11 տողից (թեև արտագրված է 5 տողի մեջ): Խաղի հանգակապ տողերը վերջանում են թե (ٸ) տառով, և այդպես էլ լուսանցքում գրած է— «տէ», սակայն հերթը արար. այբուբենի թա ((ٸ) տառինն է: Այս խաղը լրիվ հանդիպում ենք («Մով դառած էշխրս, ճոճում է նավրս») 73-րդ էջում, ինչպես և 44-րդ էջում սկսած «Ինչքան էլ վուր դուն մինձանաս, բարեկամ» խաղը, որի լրիվ տեքստը կա դիվանի 69-րդ էջում, կամ թե նույն 69-րդ էջում սկսած և չավարտած «Ինչքան էլ վուր ասլանն աղվես տապալի» խաղը անթերի կա 53-րդ էջում: Սակայն, տարբերությունն այն է, որ վերջին երկուսը հեղինակը լրացրել է դիվանի ազատ մնացած էջերում, իսկ 55-րդ էջի (և 65-ի) լրիվ բնագիրը պահպանված է դիվանում պատահական դիպվածով, որի մասին կխոսվի իր տեղում:

Մեզ գրադեցնող 55-րդ էջի ազատ մասում հետագայում, բայց ոչ ուշ, վրացատառ գրված է. «Այ սիրտ, ովոր քիզ մե յաման բան կոսև» (բառացի՝ ով քո վատը կասի) թեջնիս խաղը: Վերջում կա վրացերեն ծանոթագրություն. «Այս թեջնիսը Արուծինի ասած է, գրված է սա մարտի 19-ին, Քրոնիկոնի 446 (=1758): Էջի ստորին մասում վարժ ու հստակ բոլորագրով գրված է երգչի անհայտ մի խաղի առաջին տողը (վերնադիրը) «Փահ փահ նա աջաբ շոքրի խողա» (Օհ-օհ, ինչ հրաշալի է, փառավորյալ աստված, կամ՝ պակաս հավանականությամբ՝ որքան զարմանալի է. ինչպես է, որ...): Հատկապես Բ և

ն տառերի զբեւաձևը մերժում է այդ տողը հեղինակի գրչից ելած համարելը, բայց որ նրա խաղերից մեկի (այն էլ երևի ավարտած) առաջին տողն է՝ ըստ իս, պետք է համարել նույնիսկ անվիճելի։ Աջ լուսանցքում, երևի նույն մարդու, բայց ավելի զեղեցիկ (վրաց.) ձեռագրով կարդում ենք, ամենայն հավանականությամբ երգչի մի այլ անհայտ խաղի վերնագիրը (առաջին տողի կեսը) — «Մոսկովու դեմին վուր»... (Մոսկովայի-Ռուսաստանի նավը որ...)։ Դիվանում այս ձևով հանդիպում ենք երգչի նաև մի երկու հայտնի խաղերէնման վերնագրային նշումների։

56-րդ էջի կրկին թե-ով վերջացող և ամբողջովին հայատառ, թեջնիսր մի գողտրիկ սիրային խաղ է (հիմնականում վերծանված) «Սա էր մեղքս, ասի, դու մի խոսի, յար»։ Վերջում հայերեն ճիշտ և հստակ գրել է «թեջնիս է, լավըն», իսկ սկզբից, ինչպես սովորաբար վարվում է, բարբառի աղղեցությամբ, գրած է. «էս Արութի ասած է թեջլիս», մինչդեռ վրացերեն անսխալ գրում է թեջնիս։

Երկրորդ խաղը վրացատառ թեջնիս է առաջին երեք տունը նվիրած հին ուխտի և նոր ուխտի հայտնի հարցերին՝ Հայր Աբրահամին, Հովհաննես Մկրտչին, Ադամ-Եվային, Հիսուսի ծննդին, իսկ վերջին երկու տունը... իր սիրո հարցերին։ Այդ տուները հետևյալն են՝ չափածո թարգմանությամբ.

Դարդս շատ է, ու հայտնի է, որ դառն ա.
Թե որ ասեմ, հիսուն-հարյուր կդառնա.
Իմ ուզածը՝ նազու յարի իրանն ա,
Ես փնտրում եմ նրա կրծքում մի վրան.
Այս իմ ցավը, նույնիսկ սարը չի տանի,
Ամեն գույնի այս աշխարհը չի տանի,
Սայաթ-Նովեն մեռնելիս ախ չի անի,
Միայն թե յարրս գա, ախ քաշի ինձ վրա։

Խն տառով վերջացող այս խաղը ևս ունի հորինվելու, հավանաբար և դիվանում գրանցվելու օրն ու թվականը, գրված ձախ լուսանցքում. «էս թեջնիս. Լերութինի ասած է, մայիսի 10-ին, Քրոնիկոնի 446-ին» (1758)։ Ձախ լուսանցքի վերին մասում նշված է էջի հայերեն համարակալումը՝ Ծդ (54, երկու թիվ պակաս իրական էջերից), իսկ վերջում՝ կենտրոնից վեր—սկսում է և վրացատառ համարակալումը՝ բայց փոխանակ գրելու նդ (վրաց. 54), սխալմամբ գրել է լդ (34)։

Հաջորդ 57-րդ էջը ևս պարունակում է երկու խաղ. առաջինը, հերթականը, հայատառ, ա տունը՝ բոլորագրով։ Խաղը վերջանում է զե տառով և հեղինակի ճիշտ գրել է —ձե, մինչդեռ այբուբենի հերթականությունը պատկանում է զա տառին (շ), ինչպես նախորդը, որ պատկանում է թա (շ) տառին։ Արաբական այս երկու տառերով երևի թուրքերեն քիչ բառեր են վերջանում, գուցե և չպետք է տեղ գտնեին դիվանի հերթականության մեջ, բայց հեղինակը փորձել է արաբական, ավելի ճիշտ, արաբական ալիֆ-բեյ-ի պարս-թուրքական տարբերակի բոլոր տառերը նշել իր դիվանում։ Ի դեպ, մեզ զբաղեցնող էջի սկզբից, հեղինակի ձեռքով վրացատառ, թուրքերեն երկու բառ կա գրված՝ դուղի դիլում (շուրթ ու լեզուս կամ թուրք-զեղեցիկ լեզուս), որ պետք է ենթադրել այլ երգի վերնագիր, կամ միտքը եկած գրելիք երգի սկիզբ, որպեսզի չմոռանա, որովհետև այդ բառերը գրված են ո՛չ նոր խաղ սկսելու նպատա-

կով: Լրիվ հայատառ գրված սիրային այս խաղը ևս թեքնիս է (միայն մի քանի բառ դեռևս չվերծանված), որը սկսում է հետևյալ տողով. «Պատրույգները շարած էշխի օջախին, այրում է թիթեռների կյանքը՝ մեր այս մոմը»: Վրացատառ երկրորդ խաղը (յլ-ի տառի վրա) խրատական-դափիա է. «Սովդաքարի ապրանքը վուր թալանվի» (Ա-63), որը, երևի մոռացության պատճառով, ծանոթագրված չէ, ուստի և թվական չունի վերջում:

58—60-րդ էջերը հատկացված են հերթական այն () տառին, ինչպես և գրված է լուսանցքներում, թեև խաղերը, նախորդների նման, վերջանում են ը, ու տառերով: Հայատառ առաջինը «գողաղ-դեյմա-դենջիրլամա» (շուրթեր չդիպչող—շարակապ) խաղ է, որի բիրիական մոտիվներով անշուք գրված բովանդակությունը շարժե այսքան բարդ ու մեծ ժամանակ խլող ձևերին: Երկրորդը, վրացատառ, ոչ միայն «գողաղ-դեյմա» է, այլ և թեքնիսով-բառախաղով ձոն է նվիրած իր գողալին և իրեն, որ սկսում է «Տարին մի մեծ շողք ես տալիս աշխարհին» տողով: Վերջնականապես չվերծանված այս խաղի վերջին տունը (չափածո թարգմանությամբ երեք վարիանտից մեկը), ըստ ամենայնի հետաքրքիր, հետևյալ բովանդակությունն ունի.

Սա՛յաթ-նովա, ոչ շինող ես, ոչ քանդող.

Համեստ եղիր և միշտ՝ ճարտար ուսուցող.

Քո թիկունքից ոչ նետ կանցնի, ոչ էլ դող

Քար ու կրից մեղքդ ամուր մարդ ես դու:

Այս խաղը գրված է 1758 թ. մայիսի 10-ին: էջի վերջում, դժով անջատած վրացերեն ծանոթագրությունից հետո, կա և վրաց տառերով էջի համարակալումը նվ (56), որը համապատասխանում է հայերեն օգ-ին: 59-րդ էջում կա միայն մեկ հայատառ, կրկին թեքնիսով մի շատ հաջող խաղ, որը դեռևս լրիվ չի վերծանված (բառախաղերը չեն բացված): Սկսվում է «հագած-կապած գողալը» տողով: էջի ազատ մասում նկարած է ավելի հաջող «կյանքի ծառ»: Զգալով համարակալման սխալը, մեկ համարով մոտեցրել է իրական քանակին, գրելով ՄԸԷ (հաջորդում՝ ծք), իսկ վրացական համարակալումը, նույնքանով, ճշտել միայն հաջորդ էջում: Խաղի տարեթիվը չի գրված և չպետք է գրվեր, որովհետև դիվանի սկզբունքը, որպես վերջնական, մաքուր արտագրություն, թիվ չպետք է ունենար: Հաջորդ՝ 60-րդ էջում հերթական և հայատառ ընթերցողներին քաջ ծանոթ, «Դոստը, յարը, մեկ էլ ընկերն աշխարում» խաղն է: Սոցիալական անհավասարության շուրջը երգչի մտորումներն են արտահայտված. ուր ասվում է նաև ի՛ր, հոր և մոր որտեղացի լինելու մասին (Ա-48): Նույն էջի երկրորդ՝ վրացատառ խաղը, 1753 թ. ապրիլի 20-ին գրված (ա տառի վրա), դափիան է. «Դարդոս շատ է, ասիլ չիլի աշխարին» (Ա-24):

61-րդ էջի, ղ (ղայն) հերթական հայատառ վարսաղ խաղը, անտարակույս, հեղինակի վաղ գործերից է: էջի ազատ մնացած երկրորդ մասում այլ խաղ չի գրել: Այդ ազատ մասը ևս օգտագործել է նրա գրասեռ ավագ որդի Մելքոն և հոր բացակայության ժամանակ, 60-ական թվականներին, վրացերեն, քիչ ավելի գրագետ (լինելով մոտ 16—17 տարեկան) գրել է մոտավորապես այս կիսատ բովանդակությամբ բառերը. «Քո աշակերտ Մելքոնի երկու աչքի լույս պարոն Շավերգի պապի, ինչ լուր եկավ (ստացվեց), հայտնիք: Սա չէր կարող գրվել երգչի Թիֆլիսում գտնվելու ժամանակ, որովհետև նմանեցրել է, նույն թվերին դավթարում գրված հիշատակարաններին:

Հաջորդ 62-րդ էջում, նույնպես ղ տառի վրա «եղադամա-զենջիրամա» (քարշաձե-շարակապ) խազ է. «Նազանի նազլուն տվեց հըրաման» (Ա-74, 1963), բառացի՝ «Նազանի նազլուն մի բան հրամայեց»: Երկրորդը՝ 8-վանկ-յա աշխույժ խաղերից մեկն է. «Վարպետներու հայտնի խոսկը» (Ա-49), ուս-վերջում ասում է. «Սայաթ-Նովան» հայ է (բառացի «Սայաթ-Նովան Հիսուսի հավատը չի ուրանա (քանզի) հայ է»): Ձախ լուսանցքում ունի հետևյալ ծանո-թագրությունը՝ «Սա Արուսի (ասած) դուբեյթ է, մայիսի 20-ին, Քրոնիկոնի 446-ին» (1758):

63-րդ էջում չկա հայերեն և ոչ մի տառ. գուցե պահած է եղել այլ խաղի համար, բայց կրկին հերթական ղ տառի վրա գրել է իր նշանավոր շմառա (թվելի) խաղերից մեկը, որը միաժամանակ շատ բարդ շուրթեր չդիպչող-թեջնիս է, հյուսած քառ բառի վրա: Որպես նմուշ, հեղինակի համեմատու-թյամբ հարյուրապատիկ տանջանքով, թարգմանեցինք մոտավոր չափ՝ պահ-պանելով ոչ միայն հանգավորումը (քառ բառի հետ), այլև զերծ մնալով շրթ-նային մ, բ, պ, փ, ֆ հնչյուններ ունեցող բառեր գործածելուց. «Թար ունքով, թար աչքով» (Ա-73): Երկրորդ խաղը (ա տառով վերջացող) երգչի ընտիր, գողտրիկ ստեղծագործություններից մեկն է և թվագրված բոլոր խաղերի մեջ ամենավաղը՝ 1742 թ. հունիսի 1-ին. «Ծովեն էլած թանգ մարքարիտ ու մար-ջան» (Ա-2): Որովհետև, էջի նախորդ խաղը, թեև հաջորդական ղ տառով է վերջանում, բայց դիվանի կարգով, այսինքն հայատառ, չի գրված, նախորդող 14 և հաջորդող 9 հատ էջերի նման, ուստի, կարելի է ենթադրել, որ սա ևս հեղինակի հնագույն գործերից մեկն է: Այս խաղերը ևս իրավունք են ընձեռում մեղ առարկելու այն բանասերներին, որոնք երգչի ծննդյան թվականը փորձում են ետ բերել մինչև 1721—1724 թթ. թեև սրա դեմ ևս կարող են ազդու առարկու-թյուն բերել, որ համարյա բոլոր մեծ պոետների լավագույն ստեղծագործու-թյուններից շատերը, նույնիսկ նրանց 18—20 տարիքի բնկումներն են: էջի վերջում և լուսանցքներում պարզ գրված է. «Այս դափիան Արուսի (ասած է, ով որ սովորի, թողություն շնորհի, ամեն: Հունիսի 1-ին Քրոնիկոնի 430-ին (շլ)»: Անտարակույս, այս տողերը արտագրված են հին ձեռագրից՝ 1758 թ. մայիս ամսին (գուցե հավելումը լինի «թողություն ու ամեն» բառերը):

64-րդ էջից սկսում է հերթական ֆե տառով վերջացող խաղերի ցանկը: Այս էջի հայատառ խաղը «ավալ-ախըր» (սկիզբ ու վերջ) ֆ տառով սկսվող և վերջացող բառերով է. սակայն Ղարաբաղի բարբառի նման, թեև արդեն դարավոր, բայց ոչ հայկական այս հնչյունից գուրկ թիֆլիսահայ բարբառի (և վրացերենի) ազդեցությունն իր հետքն է թողել Սայաթ-Նովայի վրա, որով-հետև տեղ-տեղ շփոթել է թուրք. արաբ. պարսկերեն բառերի ուղղագրական օրենքը և խառնել է նաև փ հնչյունով սկսվող կամ վերջացող բառեր (փիւ, օփ և այլն): Տարօրինակ կերպով այս խաղի միայն առաջին տողը պարսկերեն է. «Ֆարսիչա մի ֆահմի, բիա-բիա, գափ» (Ֆարսերեն չե՞ս հասկանում, արի-արի զրուցիր): Խաղի մի տողը ուղագրավ է երգչի աշխարհագրական իմացություն-ների տեսակետից, գուցե անձամբ տեսել է նաև Կոստանդնուպոլիսը.

Մորթի հագիր, ու ձգտիր Մեջլումի պես.

Սիրո աշխարհ չավբես, ներհակ չխոսես,

Որ Ստամբուլ քաղաքումն էլ գովեն քեզ.

Ուր փաղշահի թախտին մոտ է Այա-Սոֆ:

(նախավերջին տունը)

...Ռամի'կ Սայաթ-Նո'վա, քո սազն է սադաֆ,
 Սուրբ Կարապետն է գալիս, խոսիր դու ամփոփ:
 (վերջին տողերը):

Այս խաղը դրված է 1753 թ. մարտի 6-ին: Գրելու թվականը բացառությամբ յոննեքի կարգին պետք է դասել, որովհետև դիվանային կարգով հայատառ խաղերը, սովորաբար, գրված են առանց ժամանակի նշման:

Հաջորդ՝ 65-րդ էջի հերթական ֆև-ուլ անավարտ հայատառ խաղը, վերը նշված երկու փաստի հետ, ուշագրավ է այն տեսակետից, որ սրա ամբողջական տեքստը (վրացատառ) հանդիպում ենք վրացատառ հին դիվանի բեկորի մեջ, որը բռնում է դավթարի 85—116 էջերը: Այստեղ խաղը գրված է ոչ հեղինակային համարակալմամբ 87 (111) էջում, նույնպես ֆև տառի վրա, բայց լուսանցքի նշումը վրացական ձևով է. „ფაფი“ (ֆ-ի վրա): Մինչդեռ, մեզ զբաղեցնող հայատառ նոր, կամ երկրորդ դիվանի լուսանցքներում, տառերը միայն հայերեն են գրված, արաբական այբուբենի տառանոցներով: Սրանից էլ պետք է եզրակացնել, որ առաջին դիվանի խաղերը կամ նրանց մեծ մասը պետք է արտագրվելն են, հայատառ-բոլորագիր դիվանի մեջ:

Մեզ զբաղեցնող այս դարա-հեջա-հեգակապ խաղը, ավելի ճիշտ, առաջին բառատողը, հետևյալ բովանդակությունն ունի.

Աշուղության ղահրը միշտ էլ էսպես է.
 Այս դարդը հենց մենք է, որ պիտի քաշենք.
 Աշուղությունը քուրա է, կխորովի, կվառի,
 Չե՞ս ձանաչում արդարություն ու օրենք:

Լրիվ օրինակում (87-րդ էջում), առաջին տողի աշուղությունն բառը գրված է աշուղների (աշղլար): Երկու տեղում էլ երկրորդ տողի այբուբենական հանդավոր վանկը, որ պետք է լիներ՝ չիմ ու ալիֆ իֆի ֆաֆ (չաֆաֆ-քաշենք), սխալ գրված է՝ ջիմ ու ալիֆ իբի քաֆ:

Երկրորդ վրացատառ խաղը (չ-ի վրա) շարակապ է. «Շուշա իս Շիրազի, մում՝ Հնդստանի» (Ա-72): Խաղը գրված է 1753 թ. մայիսի 5-ին: 66-րդ էջում միայն մի խաղ է հայատառ թեջնիս, կրկին ֆև տառով վերջացող, նույնպես առանց թվականի. «Նազուլու յարիս տեսեք, հաքած զառ, խարա» (Ա-78): Էջի ազատ մասում, դավթարում, բոլորովին անհայտ ու անփույթ վրաց ձեռագրով գրված է երգչի հայտնի խաղի վերնագիրը. «Աշխարքում ախ չիմ քաշի քանի վուր», ապա՝ սալմինև և այլ դժվար ընթերցանելի խզբզանքներ:

Հաջորդ էջում (67) հերթական դաֆ (٢) տառով սկսվող և վերջացող «ավալի-ախըր» է, որի կեսից քիչ պակասը սլարսկերեն է, զգալի մասը՝ աղբյուր-բեջաներեն, այսինքն՝ համարյա ևրկենգվյա խաղ է, գրված 1755 թ. մարտի 9-ին: Ամենից ուշագրավն այն է, որ Սայաթ-Նովան արաբական դաֆ (կղաֆ) տառի համար գործ է ածում միայն վրացական կատակային կդ (ყ) տառը որը մոտ է հնչում արաբական արտասանությանը, քան հայկական որևէ հետնալեզվային (ըստ արտաբերման տեղի) տառ: Այստեղ ահա, հայատառ (բոլորագիր) առաջին տան համար, սկզբից, կ տառից առաջ հեղինակը գրել է նաև փոքրիկ դ, իսկ բառերի վերջում դ-ն գրել է կ-ից հետո, ստացել դաֆ-ին մոտիկ հնչյուն: Երևի հնչյունային այդ նրբության հոգսն է, որ շարունակությունը գրելիս հայատառ առաջին տունը կրկին գրել է վրացատառ: Այս

փաստն այնքան ուշագրավ է երգչի, լեզվական նրբությունների մեջ, խորամուխ լինելու տեսակետից, որ ուղղագրական հարցերում նրա սովորական ռամիկ անփութությունը կորցնում է իր բանասիրական նշանակությունը: Զբաղեցնող խաղի վերջում վրացերեն ծանոթագրել է հետևյալը. «Սա ավալ-ախրը է. Արութինի ասած. ուր սովորի վարպետ մարդու մոտ՝ շասի, անտեղի է (Зѣѣѣѣѣѣѣѣѣ resp: ԵՅԵԵԵԵԵԵ Դ-ի վրա գրվեց մարտի 9-ին, Քրոնիկոնի 443-ին» (1775 թ.):

68-րդ էջում ևս հերթական դաֆ-ի վրա, բոլորագրով սկսել է գեղեցիկ թեքնիսներից մեկը, որի հանգակապ թեքնիս բառերը հնչում են միանման թախկաղակ (վրացատառ գրված) և թախկաղկ՝ հայատառ: Այդ պատճառով էլ նախորդի նման, առաջին հայատառ տունը կրկնել է և վրացատառ շարունակության մեջ: Հստ որում, արտադրության ժամանակ, այդքան փոքրիկ տառածության մեջ, ինչպես և այլ դեպքերում, որևէ բառ, պատկեր խմբագրում-սրբագրում է հեղինակը, ինչպես տեսանք և վերը: Այսինքն, նրա ստեղծագործական լաբորատորիան անվերջ գտնվել է փորձերի ու անալիզների մեջ: Այս թեքնիս խաղի առաջին տունը հետևյալն է՝ շափածո թարգմանությամբ (համարյա բառացի).


Բազեն մինչև երկնքից չի հեռանում,
Բաղը լիճ չի մտնում, չի անում դա-դա,
Այն պատճառով արցունքս չի վերանում՝
Վերքիս համար չեմ գտնում բժիշկ-ջառահ:

Երկրորդ տան վերջին երկու տողում ասում է հետևյալը.

Քանի ջուրըս ակունքից է կտրվել:
Գորտի նման, աղոթքս է՝ աղաղակ:

Վերջում ունի հետևյալ ծանոթագրությունը. «Սա թեքնիս է, Արութինի ասած դ տառի վրա. գրվել է մարտի 8-ին, Քրոնիկոնի 446-ին» (1758):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում 69-րդ էջը: Նախորդ խաղով վերջանում է դիվանի դաֆ տառով խաղերի շարքը և այս էջում սկսել է գրել դաֆ-ի հաջորդ հերթական ֆաֆ (ف) տառով վերջացող խաղ. «Ինչքան էլ վուր ասլանն աղվես տապալի» (Ա-42) վարսաղ-խրատական խաղը: Սովորականի նման առաջին տունը գրել է բոլորագրով և թողել: Հետագայում, երբ որոշում է նոտրգրով (շտապելուց) լրացնել խաղի պակասը, սխալմամբ ձեռքն է ընկնում, ավելի ճիշտ՝ աչքը կանգնում է մի ուրիշ խաղի վրա, որի առաջին տողի սկիզբը նույնպես սկսում է «Ինչքան էլ որ» (նա գաղար քի) բառերով: Եվ այս խաղի երկրորդ տնից շարունակում է արտագրել, բայց զգում է, որ սխալվում է, այնուամենայնիվ շարունակում է մինչև վերջ, ապա էջի ստորին, ազատ մասում գրում օգուժամա (խրատական) և խաղի առաջին տունը ևս արտագրում, ջղայնացած, առաջին բառում իսկ 2—3 սխալ անելով: Սա «Ինչքան էլ վուր դուն մինձանաս, բարեկամ» խաղն է (Ա-51): Դրանից հետո դիվանում փնտրում է ազատ էջ, թերին լրացնելու համար, և այն գտնում է ոչ թե այս էջից հետո, այլ նախորդ՝ 53-րդ էջում, որովհետև այդ էջին հատկացված «լավ դողաղ-դեղմա զանջի ամա» խաղը չէր շարունակելու այստեղ (զբը-ված առաջին տունը թանաքով ջնշված լինելու պատճառով, որը և մնացել է չգրված): 69-րդ էջի հետ պատահած թյուրիմացությունը անդամ է եղել,



սո 53-րդ էջում դրելու պատճառով իմանում ենք խաղը հորինելու ժամանակը (ապրիլի 20-ը, 1758). իր իսկական տեղում լրացնելու դեպքում, սովորականի պես ժամանակը չէր նշելու:

70-րդ էջից սկսվում է լամ (1) հերթական տառով վերջացող խաղերի շարքը: Առաջինը, այս էջում, պետք է լիներ մի շատ օրիգինալ խաղ, որը ոչ միայն դողաղ-դայմա և (շուրթ չդիպչող), այլև «ովսրզ» — վ տառից զուրկ, ինչպես սկզբից գրում է հեղինակը: Դրանից առաջ էլ, անժամանակ, այսինքն ոչ իր տեղում «ողորմի» է խնդրում կարդացողից (զուցե գրված է ուրիշի կողմից): Ավելին, հեղինակը մոռացել է նշել, որ խաղը միաժամանակ եղադ-լամա է (քարշած): Այսքան բարդ ձևերով արևելյան աշուղական հնարանքներով գրված չափածո երկի բովանդակությունը, ինչպես երևում է այս առաջին տնից, պետք է պարունակեր գլխավորապես բիրլիսկան մոտիվներ, որոնք քիչ չեն զբաղեցրել հանճարեղ երգչին: Սակայն այդ խաղը ևս (եթե կարելի է, ընդհանրապես, Սայաթ-Նովայի բոլոր գործերը խաղ անվանել), մնացել է անավարտ: Բոլորագրով գրված միակ այս առաջին տունը հետևյալ բովանդակությամբ ունի. «Արարիչը, երբ աշխարհը կարգի բերեց, Շեյթանին Ազրայիլն արավ զահընկեց, Հոգին ազատվեց (բառացի՝ դարձավ արդար). հոգին ազատվեց ու մարմնին հասավ: Տես, իր հավատին ոնց հաստատ մնաց Հայր Աբրահամը, որ բառասուն օրվա ծովին դիմացավ»:

էջի ազատ մասին, այն էլ երկու անգամ, «անդրադարձել է» երգչի ավագ որդին՝ պատանի Մելքոն. նախ (վրացերեն, ինչպես միշտ), կրկին քերականական կարգերի խախտումներով, ճանկուտել է հետևյալը. «Թո որդու Մելքոնի արևշատությանը (ձցտոլաձ — բառացի՝ բարի, բարվոք լինելու, ողջությանը) տեր Աստված, Հիսուս Քրիստոս»: Վերջում, դրամական արժեքների վրա երևի թվաբանական խնդիրներ է լուծել, որը հազիվ է կարդացվում, բայց մոտավորապես այսպես է ստացվում կարգավորված վիճակում. «Տասը թումանը հավասար է (?) 170 մինալթիի, տասը թումանը հավասար է 670 աբասիի»: Այս էջից զգացվում է դիվանի վերջը: Բայց, ո՛չ:

71-րդ էջում (իր հաշվով 2-70) նույնպես չ տառի խաղ է. «Թե ուզում իս Հայր Աբրամի պես ապրիս» (Ա-79): Սկզբից հայերեն գրած է. «Սա վարսաղ է Արութի ասած». վերջում վրացերեն՝ «Սա խրատական է Արութինի ասած»: Բ դեպ, այստեղ ևս վրացատառ շարունակության մեջ դրված է ամբողջ խաղը:

72-րդ էջը հայատառ դիվանի ամենագեղեցիկ, մաքուր բոլորագիր ձևադրային էջն է. ինչպիսիք են առաջին 10 էջերը, հատկապես 2-րդը, 10-րդը, մասամբ 23-րդը և 25-րդը: Այս էջով ու այս էջի լամ տառով վերջացող «Դրուստ է, վուր յարին մուրվաթ չէ էլած» (Ա-36) գեղեցիկ «լավ» թե՛նիս խաղով էլ վերջանում է Սայաթ-Նովայի ձեռքով գրված հայատառ դիվանը: Սա նաև այն վերջին խաղն է, որի սկզբից վերջին անգամ հայերեն գրվում է խաղի անունը, այլև երկրորդ անգամ (իսկ ընդհանրապես՝ երրորդ) քեջնիս բառը ճիշտ գրված է ն-ով, և ոչ թե սովորական բարբառային քեջլիս ձևով:

Ուշագրավ է, որ դիվանի մեջ միայն հայատառ էջերի, խաղերի սկզբից է գրվել հայերեն ծանոթագրությունը՝ խաղի անունը: Այն էջերում, ուր խաղերը զուտ վրացատառ են գրված թե՛ դիվաններում և թե՛ ամբողջ դավթարում, հայերեն խոսքի չենք հանդիպում, այլ միայն՝ վրացերեն, այն էլ բացառապես վերջում կամ լուսանցքում, և ոչ թե սկզբից: Սրա պատճառը այն է, որ այս

երկրորդ, իսկական դիվանը (1758 թ.), հեղինակի ծրագրով նկատի է ունեցվել, որպես հայատառ գիրք, շատերի համար ընթերցելու, սովորելու բոլորագիր՝ այնպիսի ձեռագիր գիրք, որպիսիք հեղինակը հանդիպել է հայկական եկեղեցիներում և վանքերի, հատկապես Սանահնի, մատենադարաններում, հարմարեցված արտաքաշելու՝ դյուրին արտագրելու, բազմացնելու համար։ Անտարակույս, այսպես նա պետք է գրեր-կազմեր առնվազն երեք գիրք, որոնցից հայերեն ու վրացերեն խաղերի հատուկ ժողովածուները հազիվ թե լինեին դիվանի սկզբունքներով կազմած։

Կարող է հարց ծագել, թե հեղինակը ինչու է սկսել ադրբեջաներեն խաղերի դիվանից։ Նախ չդիտենք, թե հայերենն ու վրացերենը չեն եղել մաքրագրված։ Հայերենը, ոչ լրիվ, մեզ հասել է սևագիր տետրերով, իսկ վրացերեն խաղերից հեղինակի ձեռքով գրված և ոչ մի տող չի մնացել։ Քանի՞ անգամ է ավերվել Կովկասը, Վրաստանը, Հայաստանը։ Իսկ, մանավանդ տներում գտնվող, ոչ մազադաթյա, այլ թղթյա, այն էլ մի օրինակ գիրքը այդքան հեռավոր անցյալում մեկ դարի ընթացքում կարող էր տասնյակ անգամ ենթարկվել կորստի ու ոչնչացման, նույնիսկ առանց խոշոր քաղաքական ցնցումների՝ զաղթների, կողոպուտի, հրդեհի։ Վերջապես, թուրք-ադրբեջաներեն վաղուց է սկսել խաղեր հորինել և հանրածանոթ այդ լեզվով գրված խաղերի մեջ շոշափված էին ավելի հրատապ՝ հասարակական, կրոնական հարցեր, որոնք այնքան կենսական էին այն դարում բոլորի համար, առավել չափով հայ բնակչության համար։ Թուրքերենը մատչելի էր Կովկասի և Առաջավոր Ասիայի բոլոր ժողովուրդներին, իսկ հայ աշուղների, շարժուն վաճառականների, արհեստավորների, շասենք նաև մտավորականների քանակը բոլորից շատն էր, որոնք և պետք է լինեին նաև 18-րդ դարի բազմաշնորհ երգչի, գեղարվեստական խոսքով արտահայտած, առաջավոր գաղափարների տարածողները։ Ահա թե ինչու կարևոր էր նախ և առաջ ազգերի թուրքերենով գրված խաղերի ժողովածուն կազմել և գրավոր ձևով ևս լայն շրջանառության մեջ դնել։

Արդ, այս դիվաններով սպառվել է երգչի ադրբեջաներեն լեզվով մինչ այդ գրված խաղերի ցանկը։ Ո՛չ, իհարկե, թղթի սղուծյունը, գուցե և արտակարգ դեպքեր, երգչին հարկադրել են այս երկրորդ հայատառ իսկական դիվանը լրացնել սևագիր տետրերով, նկատի չունենալով դիվանի սկզբունքը։ Եվ հայերեն ու ադրբեջաներեն խաղեր պարունակող վրացատառ ընդհանուր մաքրագիր տետրից-դավթարից նա պոկել, անջատել է ադրբեջաներեն խաղերի թերթերը և միացրել դիվանին, երևի հենց մեզ վբաղեցնող գեղեցիկ գրված 72-րդ հայատառ էջը ավարտելուց հետո։ Դրանք ընդամենը 6 թերթ են (12 էջ) Ոսյաթի գրված 12 խաղով։ Այս թերթերը, ըստ ամենայնի, հար և նման են հայերեն խաղերի տետրի թերթերին և նրանց նման էլ վերջում, կամ լուսանցքներում ունեն գրելու-հորինելու տարեթվերը։ Այս վեց թերթը Դիվանին կարելուց հետո, նրա հայատառ և վրացատառ համարակալումը շարունակել է և 73-րդ էջից հասցրել 79-րդ էջին (ՀԲ—ՀԸ)։ Մնացած 5 էջերը չի համարակալել, բայց դրանցով ավարտվել է սույն դիվանը, իրականում հասնելով 84-րդ էջին։ Երկար ժամանակ այս դիվանը առանձին գիրք է եղել, որը երբևիցե է նաև 84-րդ՝ վերջին էջի վրա պահպանված, անշուշտ երգչի կնոջ, տխուր հիշատակարանից։

Հետագայում, կեսն ադրբեջաներեն, կեսը հայերեն խաղերից կազմած առաջին վրացատառ դիվանի պահպանված միջուկը ևս, որին ծանոթացանք

սկզբից, կցվել է այս դիվանին և համարյա կազմել որոշ ամբողջություն, մանավանդ, որ առաջին դիվանի այս միջուկը սկսվում է լ (լամ) տառով վերջացող խաղերով և ավարտվում արաբական այբուբենի վերջին տառերով:

73-րդ էջում ք տառով վերջացող երկարաշունչ, աշխույժ էղազլամադոշամա խաղն է՝ «Ծով դառած էշխրս ճոճում է նավըս» (Ա-79), որը նաև շարակապ է: Սրա առաջին բոլորագիր տունը, ինչպես նշել ենք, գտնվում է հայատառ դիվանի 55-րդ էջում: Այսինքն, այս հին, վրացատառ դիվանից պետք է արտադրվեր նոր հայատառ դիվանում, բայց չի հասցրել, որի հնարավոր պատճառների մասին ևս սկզբից ասվել է: Այս էջի վերջում երգչի գրիչ բեկամեններից մեկը, վրաց գեղեցիկ մխեդրուլի տառերով գրել է իր անունը, «Աբբամ, իկղո ղոթիս» (ղթիս=ղմերթիս)—Աբբամը է Աստծու (ծառա):

Հաջորդ էջում (74) «Գլխովըտ ման տամ յիս, քու ցավը տանեմ» (Ա-32) խաղն է, րե տառի վրա, գրված 1754 թ. մարտի 2-ին: Ծանոթագրության մեջ վրացերեն ասված է. «Սա Շիրվանի(ի) հանգում յարանա է, Արուծինի ասած, լավն է Ալեգս(անի) ասած (կարելի է կարդալ նաև «լավ տեղում —ալագի-ասած»): էջի ձախ լուսանցքում (Մեկթոն) երկու «պուխ» և մի «մարդ» է նրկարել:

75—76-րդ էջերում Սայաթ-Նովայի հայտնի «Ջավսաթլաման» է՝ ինքնակենսագրականը, ավելի ճիշտ, ընդհանրապես մարդու հարյուրամյա կենսագրությունը, որպիսի մոտիվը տարածված էր աշուղական գրականության մեջ: 48 տողից բաղկացած (12 տուն) և տառով վերջացող այս ոտանավորը գրված է 1750 թ. հունվարի 3-ին, մի թվական, որը չի համընկնում երգչի ծննդյան ժամանակի համար բանասիրության մեջ հայտնված որևէ, այսպես ասած կտոր, թվականի (1711—1724), չհաշված 1710, 1715, 1720 թվերը: Հեղինակը գոնե պետք է 30—40 տարեկան դարձած լիներ, որպեսզի մտածեր նաև մարդու կենսագրությունը գրելու համար: Ի դեպ, այս ինքնակենսագրականի առաջին մասը (12—35 տարեկանը) շատ լավ համապատասխանում է հենց Արուծին—Սայաթ-Նովայի ավանդական ու փաստական կենսագրությանը:

77-րդ էջում հեղինակի շատ ուշագրավ և նշանավոր հնգյականներից-մուխամասներից մեկն է. «էշխի ծովի միշեն հանած լալ ու գոհար է բիռըս» (Ա-1), որ հավանել է և ինքը, կարճ գրելով՝ «կարգի»-լավ (է): Սայաթ-Նովայի այս բացառիկ ստեղծագործություններից մեկը, Մ տառով, գրված է ապրիլի 10-ին, 1752 թ. (Քրոնիկոնի ՈւՄ=440-ին): Խաղի վերջին տունը գրված է հաջորդ՝ 78-րդ էջում:

78—79-րդ էջերն զբաղեցնում է շատ բարդ, բայց դյուրին հասկանալի չափածո պատում, կրկին բիրլիական մոտիվներից, վերջում խրատներով ու ըսպասելիքներով: Սա մի երկարաշունչ, ի տառով վերջացող, մուսամմաս-բայաթի է, այն էլ դողաղ-դայմա (շուրթ չդիպչող), սակայն հորինված է բացառիկ հաջողությամբ: Սկսվում է Ադամ-Նվայից, առաջին մեղքից, անցնում ջրհեղեղին, Հայր Աբրահամին, ապա «ծովից հարկ պահանջող» մեծ Իսկանդարին (Ալեքսանդր Մակեդոնացուն), հարցումով, թե ի՞նչ տարավ աշխարհից, դիմում իրեն. «Նստիր, Սայաթ-Նովա, ծովից դուրս եկ ծանծաղուտ (դայազ) ափ», որ փողը (Գարրիելի) հնչելիս, քարերը կհալվեն, «Շեյթանը Դուլ-դուլ»¹⁵ կդառ-

¹⁵ Մոհամմեդի նժույզը:

նա, մեղավորներու արյուն կողբան, հոգին (մարմինը) վարդի կփոխարկվի»։ Գրված է 1754 թ. ապրիլի 1-ին։

Հաջորդ 80-րդ էջում նախորդ մոտիվի շարունակությունն է, ինչպես ինքն է գրում «Քրիստոսին աստված ճանաչելու» հարցի մասին «վարսաղ է», հարցումներով։ Վերջում ասում է Հիսուսը ավետարանում մարգարիտ է ցանել, այդ պատճառով է, որ «ինքը զմայլված է, Սայաթ-Նովայն արվեստի մուսայից՝ Չանգլի փիրից է խմել (արվեստի գինին), դրա համար է, որ չի ձանձրանում, (չի հոգնում գրելուց), ահա՛, թե ինչու»։ Խաղը գրված է 1758 թ. հունիսի 10-ին։ Նույն էջում սկսում է և հաջորդում վերջացնում նույն օրը հորինած իր գողտրիկ խաղերից մեկը. «Աշուղ ըլիլն ինձ համա մինձ ցավ դառավ» (Ա-43), իսկ 81-րդ էջում սկսում և վերջացնում է խրատական գեղեցիկ վարսաղներից մեկը, «Նոր խոջաներ, ձրրի մալ տան, շառնիք դուք» (Ա-62), գրված 1758 թ. հունիսի վերջերին։

82—83-րդ էջերում, հավանաբար մեկ օրում գրված, երեք ընտիր երգեր կան, մեկ հղանակով երգվող, Սրանք այնքան աշխույժ, հատկապես երգելու համար գրված խաղեր են, որ կարդալու ժամանակ հարկադրում են երգելով կարդալ։ Հայերեն թարգմանելիս, առավելագույն հնարավորությամբ, աշխատել ենք պահպանել դրանց նաև այդ հատկությունը։ Դրանցից առաջինը. «Քանդվում է հոբուս աշխարհը» (Ա-45) խաղն է, երկրորդը «էս էշխըն ինձ փիրն է տվի» խաղը (Ա-44), որի վերջին տողերը հաջորդ՝ 83-րդ էջում են, իսկ երրորդը. «էշխեմետ յիս դառա խասսա» խաղն է։ Առաջին երկուսի համար, ձախ լուսանցքի երկարությամբ գրված է. «էս երկուսն էլ մեջլիսի ռովանի (պատշաճ)»—թասլիր է, մի հղանակով, Արուսիների ասած, հունիսի 10-ին, Քրոնիկոնի 446-ին» (1758)։ Երրորդ երգի մասին, աջ լուսանցքում. «Սա էլ կողբի երգերի եղանակով»։

83—84-րդ էջերում գրված է դիվանի վերջին խաղը. «Ասի, գոզալ, դարդրս ասիլ չիմ կանա» (Ա-35)։ Բնագրում, բառացի՝ «Ասի յար, (քո հասցրած) դարդին դիմանալ չեմ կարող» խաղն է։ Սա ևս համարյա նախորդ երգերի նման է հնչում, գուցե և նույն ժամանակ, նույն օրվա, կամ մոտիկ օրերից մեկում գրված։ 83-րդ էջի աջ լուսանցքի ստորին մասում ունի հետևյալ ծանոթագրությունը. «էս թասլիր է. «Խտարամ գոլանում բաշընա յարուն» (երգի) հղանակով. 446-ին» (1758)։ Դեռևս հնարավոր չի հղել պարզել, թե նշված թուրքերեն երգը (կուղենամ յարի գլխովը ման տամ) ի՞ր՝ Սայաթ-Նովայի գրածներից է, թե՞ որևէ այլ հեղինակի գրած, ժամանակին հայտնի երգերից մեկը։

Հաջորդ՝ 84-րդ էջում վերջանում է խաղը։ Ուշագրավ է, որ վերջին տողի տակ շատ մոտիկից անջատման, հորիզոնական գիծ է քաշած և վերջին բառերը փոխադրած ձախակողմյան լուսանցքը, մինչդեռ էջի կեսից քիչ ավելին ազատ է մնացել։ Անվիճելի է, որ հեղինակը բաժանման գիծը քաշել և նույնիսկ մեկ տողի տեղ խնայել, որպեսզի մի այլ խաղ տեղավորի, որովհետև տետրի վերջին էջն է եղել։ Սակայն, խաղը չի գրել։

Էջի այդ ազատ մնացած մասում է, որ նախ, Մելքոն գրել է վրաց այբուբենի առաջին 8 տառերը, ըստ որում, ամեն ինչ գրելուց առաջ, դարի սովորության համաձայն, սկզբից Ք տառը (Քրիստոս) դնելով։ Երկրորդ, գրված է ամենայն հավանականությամբ, երդչի մեզ անհայտ խաղերից մեկի վերնագիրը (առաջին տողը). «Մանում բաղում բուլբուկ գիրմաղ» (իմ այգին սոխակ

չի մտնի), բայց գրածը ջնջված է: Նրրորդը, մի փոքրիկ և շատ ուշագրավ, անվարժ վրացերենով հիշատակարան է, որը, իմ հաստատ համոզմամբ, պատկանում է Սայաթ-Նովայի կնոջը, հավանաբար հենց իր ձեռքով գրված: Հիշատակարանի բովանդակությունը հետևյալն է. «Նրանի տեր Ստեփանը հաջողությամբ վերադառնա, այս գիրքը կարդա ինձ համար, իր երեխաների կենաց համար և իմ արգլս (խնդիրքս, մուրազս) չմնա և իմ դժբախտ գլուխս նրան ծառայի. ամեն»: Այս տողերով էլ ավարտվում է դիվանը:

Տեր Ստեփան-Սայաթ-Նովան այդ տարիներին (1764—67 թթ.) գտնվում էր համարյա աքսորի մեջ, բռնությամբ քահանա ձեռնադրվելուց հետո մենակ ուղարկված Զաքաթլա: Նրա կնոջ այդ առջը շիրականացավ, որովհետև մեռավ 1768 թ.: Դրանից հետո է երևի, որ Տեր-Ստեփանը իրավունք ստացավ վերադառնալ, իր որբացած չորս երեխաների կյանքը տնօրինելու համար:

Սրանով ավարտեցինք Սայաթ-Նովայի հուշակված Դավթարի մեծ մասի նկարագրությունը. այն մասի, որի մեջ ամփոփված են երգչի աղբյուրներեն խաղերը, և հայերեն խաղերից 15-ը, որոնք մնացել էին գլխավոր, երկրորդ կամ հայատառ դիվանին կցված հին դիվանի երկրորդ կեսում, բռնելով արդի համարակալմամբ 102—116 էջերը: Իմացանք նաև այն տարածված թյուրիմացության պատճառը, որ ամենուրեք ասվում և գրվում էր մեխանիկորեն, թե Սայաթ-Նովան իր հայերեն խաղերը գրել է վրացական տառերով, իսկ թուրքերեն-աղբյուրներեն խաղերը՝ հայկական տառերով: Դավթարից մնում է նկարագրելու հայերեն տողերն ընդգրկող տետրերի բեկորները, նոր համարակալմամբ 117-րդ էջից մինչև 139-րդ էջը, որով վերջանում է երգչի ինքնագիր տաղարանը-դավթարը (հաջորդ 140-րդում Պենդելենցի հիշատակարանն է):

* * *

Սայաթ-Նովայի գրական ժառանգության երկրորդ մեծ աղբյուրը, նրա կրտսեր որդի Օհանի (Հովհաննեսի) կազմած ժողովածուն է: Այս ժողովածուն նա կազմել է իր հոր մահից շուրջ քառորդ դար հետո, 1823 թ. Պետերբուրգում, վրաց գիտնական արքայազն Թևյումրազի պատվերով:

Օհանի կազմած ժողովածուի նկարագրությունը ևս կարևոր է, մանավանդ, տարբերակների տեսակետից, որովհետև այն, փաստորեն, համարվում է բնագիր և կիսաբնագիր: Այս ամենի մասին կիսովի «Տեղեկագրի» հաջորդ համարներից մեկում, Կիսովի նաև զանազան աղբյուրներից, արխիվներից, աշուղական երգերից, անհատներից ձեռք բերված խաղերի մասին, որոնց քանակը ևս քիչ չէ (երեք լեզվով՝ շուրջ 30 հատ):

Այսպիսով, դավթարում, հեղինակի ձեռքով գրված զուտ աղբյուրներեն լեզվով ամբողջական խաղերի քանակը հասնում է 105-ի: Սրան պետք է գումարել երկու հատ 8 տողանոց, մեկ հատ 6 տողանոց, յոթ հատ 4 տողանոց թերի խաղերը, որով կստանանք 115 անուն խաղ: Այս քանակից զատ կա 2 հատ պարսկերեն-աղբյուրներեն, 2 հատ հայերեն-աղբյուրներեն (չհաշված 4 լեզվով խաղը), որոնց հետ միասին քանակը հասնում է 119-ի: Եթե ավելացնենք Օհանի ժողովածուի 3 լրիվ խաղը, (122) և 10 հատ զանազան աղբյուրներից հավաքված, ապա աղբյուրներեն անուն-խաղերի քանակը կհասնի 132-ի, ավելի քան հայերենը (69—70) և վրացերենը (34—35): Առ այժմ զուտ աղբյուրներեն լրիվ խաղերի քանակը հասնում է 118—120 հատի: